

## Արձանագրություն թիվ 1

Մ.Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոցի ծնողական համայնքի ընդհանուր ժողովը գումարվել է 2021 թվականի սեպտեմբերի 3-ին:

Ծնողական համայնքի ընդհանուր ժողովին մասնակցում են 290 ծնողներից 270 -ը, բացակա՝ 20-ը:

### Օրակարգում՝

1. Օրակարգի հարցերի հաստատման մասին:

Զեկուցող՝ Կ. Սարգսյան

2. 2021-2022 ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ նախագծի վերաբերյալ կարծիք տալու մասին:

Զեկուցող՝ Ն.Մխիթարյան

3. Սովորողների արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների, լրացուցիչ անվճար կրթական ծառայությունների մատուցման մասին:

Զեկուցող՝ Ն.Մխիթարյան

4. Ծնողական խորհրդի 2021-2022 ուստարվա աշխատանքների հաշվետվություն:

Զեկուցող՝ Վ. Մանջիկյան

5. Գիտելիքների, կարողությունների և արժեքային համակարգի ստուգման հարցի մասին:

Զեկուցող՝ Ն. Մխիթարյան

6. Դասարանական ծնողական խորհուրդների թվակազմի հաստատում:

Զեկուցող՝ Կ. Սարգսյան

7. Կազմակերպչական հարցեր:

Զեկուցող՝ Ն.Մխիթարյան

Ծնողական համայնքի ընդհանուր ժողովը

### Որոշեց-1

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը

## Որոշեցին-2

Հավանություն տալ 2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքային ծրագրին:

## Որոշեցին-3

Հավանություն տալ լրացուցիչ անվճա և վճարովի կրթական ծառայությունների մատուցման ծրագրերին:

## Որոշեցին-4

Ծնողական խորհրդի 2020-2021 ուստարվա աշխատանքները գնահատել լավ:

## Որոշեցին-5

Հավանություն տալ գիտելիքների ,կարողությունների և արժեքային համակարգի ստուգման ձևաչափին և սատարել ուսուցիչներին աշակերտներին ապահովել անհրաժեշտ ուսումնական նյութերով:

## Որոշեցին-6

Հիմք ընդունելով ՀՀ <<Պետական .հանրակրթական ուսումնական հաստատության>> ՊՈԱԿ –ի կանոնադրության 95 կետը և հաշվի առնելով ծնողների առաջարկությունները՝ որոշեցին դասարանական ծնողխորհրդի կազմը հաստատել 1 նախագահ և 3 անդամ սկզբունքով:

## Որոշեցին -7

**ա.** Հիմք ընդունել տնօրենի հանձնարարականը,ուղեցույցը և տնօրինության կողմից մշակած ծրագիրը պահպանել առողջ և անվտանգ կրթական միջավայր :

**բ.**Հիմք ընդունելով ԿԳՄՄՆ հրահանգը և քաղաքապետի հրամանը բացառել ցանկացած դրամահավաքության փորձ:

Նիստի նախագահ՝

Ն.Մխիթարյան

Քարտուղար՝

Կ. Սարգսյան